ՔԱՂՎԱԾՔ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

11.11.2019թ. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստին ներկա Խորհրդի անդամներ. Ի.Գասպարյան, Ռ.Վարժապետյան, Ս.Նամչևաձե, Է.Ցոմայա, Ս.Սուլթանյան, Վ,Վուխրեր, Մ.Մինասյան, Ա.Միխայլով, Կ.Հասանով, Վ.Ամիրյան, Աննա Հարությունյան, Ս.Ռաչկո, Մ.Լազարևա, Ի.Պողոսյան, Գ.Գավրիլովիչ, Լ.Հարությունյան:

Խորհրդի նախագահ՝ Ս.Ղազարյանը նիստի նախագահող, Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վ. Ասցատրյանը, խորհրդի քարտուղար՝ Ն.Գուլյանը:

Բացակա՝ 6 անդամ. Յ.Յակովենկո, Աիդա Հարությունյան, Խ.Հաջոյան, Վ.Վայներ, Մ.Գալստյան, Ջ.Դոմբայան

Նիստին ներկա հրավիրված անձիք՝ հունական «Պոնտի» ՀԿ նախագահ Է.Միխաիլովը և Ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային կենտրոնի ծառայության պետ Ա.Հակոբյանը:

Օրակարգի 2-րդ հարցի համաձայն քննարկվեց և նիստի որոշմամբ միաձայն հաստատվեց Խորհրդի միասնական միջոցառումների համար նախատեսված 1,2 հազար դրամ գումարի շրջանակներում կազմակերպել.

ա/ այց-միջոցառում Լոռու մարզի Դսեղ համայնք՝ նվիրված Հ.Թումանյանի 150—ամյակին,

բ/ Ամանորին նվիրված միջոցառում

Օրակարգի 3-րդ համաձայն քննարկվեց և նիստի որոծմամբ միաձայն հաստատվեց 2020թ. համար ՀՀ պետական բյուջեով ազգային փոքրամասնությունների համար նախատեսված 20 մլն դրամի բաշխման կարգը, այն է՝ ընդհանուր գումարից 9 մլն. դրամը բաշխել հավասարապես Խորհրդում 11 ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների միջև, 1,2 հազար դրամը հատկացնել խորհրդի միասնական միջոցառումներ կազմակերպելու համար, իսկ մնացած 10 մլն. դրամը բաշխել համաձայն ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների (ոչ միայն Խորհրդի անդամ

հանդիսացող) կողմից նախապես ներկայացված և խորհրդում հաստատված ծրագրերի համաձայն:

Նիստի նախագահող՝	Սրբուհի Ղազարյան
Քարտուղար՝	Նարինե Գուլյան